ՀՏԴ 37.01

ՀԱՄԱԿԱԶՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՐԴԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Աննա Պետրոսյան
մ.գ. թ. դոցենտ
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
ԱՀ ԿԳՍ նախարարություն
Արցախ

Անոտացիա

Հոդվածում ներկայացված է կարդալու միջոցով համակազմ դասարաններում սովորողների քննադատական մտածողության զարգացման որոշ մոտեցումներ : 2-րդ և 4-րդ համակազմ դասարանում մենք առաջարկում ենք քննադատական պատասխան պահանջող հարցադրումներ, որոնք խնդրի ձևակերպման, տեղեկությունների հավաքման միջոցով պատասխանելու ժամանակ սովորողների մոտ կզարգանա քննադատական մտածողություն: Ներկայացնում ենք նաև համակազմ դպրոցներում առկա խնդիրները, առավելություններն ու թերությունները: Առաջարկում ենք կարդալու երեք եղանակ, որոնց օգնությամբ նպատակային է դառնում դասագործընթացը հիշյալ դասարաններում:

Բանալի բառեր. *Քննադատական մտածողություն, ապացույցներ, հիմնավոր զարգացում, կարդալ, խնդրի ձևակերպում, ինֆորմացիայի հավաքում, հետևանքներ, կարծիքներ, համակազմ դասարաններով դպրոց:*

Քննադատական մտածողությունը (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ է, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն [8, էջ. 120]:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները:

Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայման է:

Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները:

Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը:

Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին» [8, էջ. 125]: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել[8, էջ. 127]: Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով[8, էջ. 30]:

Լրացուցիչ մեկնաբանություն տալու նպատակով Ռիչարդ Պոլը (1995) առաջարկեց քննադատական մտածողությունը բաժանել երկու տիպի՝ թույլ և ուժեղ: Թույլ իմաստով քննադատական մտածողությունը սահմանվում է որպես բարձր որակավորում ունեցող, բայց եսասիրությամբ մոտիվացված կեղծ-մտավորականի մտածողություն, ով զբաղված է իր բարեկեցության խնդիրներով և լրջորեն չի մտածում իր գործողությունների էթիկական հետևանքների մասին: Նման մտածողության կրողը հաճախ ունի բարձր կրթություն, սակայն օգտագործում է իր գիտելիքները անարդար և եսասիրական նպատակներով[6]: Քննադատական մտածողությունն ուժեղ իմաստով՝ առանց եսակենտրոն մոտիվացիաների և սոցիալական ուղղվածության շեղման, օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով արված դատողությունն է: Այս իմաստով քննադատական մտածողությունն անկեղծորեն միտված է ճշմարտությանը հասնելու ճանապարհին խոչընդոտները հաղթահարելուն[8, էջ. 131]:

Քննադատական մտածողության զարգացումը կարդալու միջոցով նշանակում է ոչ թե լսել ու կրկնել, այլ մտածել ու ասել:

Քննադատական մտածողության նպատակն է կրթել ակտիվ, նախաձեռնող, քննադատաբար մտածող, կշռադատված որոշումներ կայացնող մարդ, քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ:

Ահա 5 քայլ, որոնք կօգնեն ընդունել ճիշտ որոշումներ.

- ձևակերպել խնդիրը,

- հավաքել տեղեկատվություն,

-օգտագործել այդ տեղեկատվությունը ,

-մտածել հետևանքների մասին,

- ուսումնասիրել այլ կարծիքներ:

Ընդհանուր կրթական համակարգի կտրուկ փոփոխությունների պայմաններում հատուկ ուշադրություն է դարձվում գյուղական դպրոցներին, որոնց մեծ մասը համակազմ դասարաններ ունի: Մինչ օրս բոլոր դպրոցների մեծամասնությունը գտնվում է գյուղական վայրերում, որոնցից մոտ 60% -ը փոքր է: Գյուղական նման դպրոցը հանրապետության կրթական համակարգի անբաժանելի մասն է: Դրանք տեղակայված են այն վայրերում, որտեղ չկան դասարաններ կազմավորելու համար բավարար թվով երեխաներ և կոչվում են համակազմ դասարաններով դպրոցներ:

Համակազմ դասարաններով դպրոցներում դասավանդողները քիչ են, քան դասերը, և յուրաքանչյուր ուսուցիչ միաժամանակ աշխատում է մի քանի դասարանում:

Բնականաբար, համակազմ դասարաններով դպրոցները որոշակի **առավելություններ ունեն** .

1. դպրոցում փոքր թվով աշակերտներ են, քիչ քանակությամբ դասարաններ: Եթե այդ առավելությունը ճիշտ օգտագործվի, ուսուցիչը հիանալի հնարավորություն կունենա կազմակերպել անձնակողմնորոշիչ կրթական գործընթաց:

2. համակազմ դասարաններով դպրոցը փոքր, անհավասար տարիքային խումբ է. 20-30 աշակերտների հետ դպրոցը մեծ ընտանիք է հիշեցնում:

3. ուսուցիչների և աշակերտների փոխհարաբերություններն այստեղ ավելի մոտ են և ավելի ջերմ, քան մեծ խմբերում: Հետևաբար, մեծ դպրոցների բնորոշ այլ հանցագործությունների հնարավորությունները բացառվում են: Յուրաքանչյուր ոք այստեղ գիտի, բոլորը սիրում են, բոլորը հավատում և օգնում են միմյանց [12, էջ 44] :

Համակազմ դասարաններով դպրոցը կանգնած է նաև բազմաթիվ *կոնկրետ դժվարությունների* առաջ: Այսօր համակազմ դասարաններով դպրոցը կարիք ունի մանկավարժական գործընթացի հատուկ կազմակերպման, որտեղ կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական զարգացման կոնկրետ մոտեցումները, բազմաթիվ տարածաշրջանային, սոցիալ-տնտեսական մշակութային գործոնները:

Հեռավոր գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքներում այլ կրթական հաստատությունների բացակայությունը զրկում է գյուղի դպրոցի աշակերտին լրացուցիչ կրթության հնարավորություններից, ժամանակակից սարքավորումներից [12, էջ 48] :

Համակազմ դասարաններով դպրոցի ուսուցիչ աշխատելն անկասկած դժվար է, քան սովորական դպրոցում: Նա շատ դժվար պայմաններում է աշխատում և պետք է տարբեր դասեր անցկացնի միաժամանակ տարբեր տարիքի երեխաների հետ:

Միաժամանակյա դասաժամերով դասագործընթացները համակազմ դասարաններով դպրոցի ուսուցչից պահանջում են ավելի մանրակրկիտ նախապատրաստում, կրթական աշխատանքների ճիշտ կազմակերպում, դասերի արդյունավետ պլանավորում, ինչպես նաև մանկավարժական վարպետության հմուտ դրսևորում:

Երկու կամ երեք դասարաններում միաժամանակ աշխատելը ունի որոշ թերություններ.

❖ ուսուցիչը ստիպված է ուղղակիորեն աշխատել կազմի կեսի հետ, իսկ մյուս կեսի հետ պետք է ինքնուրույն աշխատանք կազմակերպի,

❖ ուսուցչի ուշադրությունը բաժանվում է երկու կամ երեք դասարանների միջև.

❖ ինքնուրույն աշխատանք կատարելու ժամանակ երեխաները զրկված են ուսուցչից անմիջական օգնություն ստանալու հնարավորությունից, քանի որ ուսուցիչը այդ ժամանակ զբաղեցնում է մեկ այլ դասարան,

❖ աշակերտները պետք է կամ ավելի շուտ ստիպված լինեն ինքնուրույն աշխատել մեկ այլ դասի միջամտության առկայության դեպքում, քանի որ այդ պահին մեկ այլ դասարանում կարող են զրույց, բացատրություն և այլն:

Իսկ նման դպրոցներում սովորող աշակերտների մոտ ուսուցիչը պետք է քննադատական մտածողություն զարգացնի հենց կարդալու միջոցով: Գոյություն ունի ընթերցանության երեք տարբեր եղանակ:

I եղանակ -կառուցվածքային կամ վերլուծական. այս դեպքում ընթերցողը գնում է ամբողջից դեպի մասնավորը:

II եղանակ —վերաներկայացման կամ սինթետիկ. այստեղ ընթերցողը գնում է մասնավորից դեպի ամբողջը:

III. եղանակ — քննադատական կամ գնահատող. կարդացողը գնահատում է հեղինակին և որոշում համաձա՞յն է ինքը նրա տեսակետին:

Այս երեք եղանակներից ամեն մեկը ենթադրում է մի քանի գործողությունների կատարում, իսկ դա նշանակում է հաշվի առնել մի քանի կանոններ [6, էջ 38]:

Առաջին եղանակով կարդալու դեպքում սկզբում պետք է որոշել այն խնդիրը կամ խնդիրները, որոնք փորձում է հեղինակը լուծել: Երկրորդ եղանակի վերջին քայլում պետք է հասկանալ հեղինակը արդյո՞ք լուծել է իր առջև դրված խնդիրները և հատկապես ո՞ր հարցերին է հեղինակը պատասխաններ տվել: Տեսնում ենք, որ այս եղանակները փոխկապակցված են և վերջնական փուլում միավորվում են:
Հմուտ ընթերցանության զարգացման համընթաց կսովորենք կարդալ միաժամանակ երկու եղանակներով: Որքան լավ դա ստացվի, այդքան ավելի շատ մի եղանակը կհամագործակցի մյուսի հետ: Բայց երրորդ եղանակը երբեք չի կարող ուղեկցել մյուս երկուսին: Նույնիսկ ամենահմուտ ընթերցողը պետք է առաջին երկու եղանակները առանձնացնի երրորդից: **Հեղինակի դիրքորոշման հասկացումը միշտ պետք է նախորդի տեքստի քննադատությանը կամ գնահատմանը**:

Կան «ընթերցողներ», որոնք սկսել են երրորդ եղանակից, երբեմն ընդհանրապես անտեսում են առաջին և երկրորդ եղանակները: Նրանք իրենց ձեռքն են վերցնում գիրքը և շուտով արդեն համոզված պատմում են, այնտեղ ինչը այն չէ: Հազիվ թե այդ մարդկանց կարելի է անվանել ընթերցող: Ավելի ճիշտ է նրանց դասել այն մարդկանց շարքին, ովքեր գրքի շուրջ խոսակցությունն օգտագործում են որպես առիթ ինքնահաստատման և մենախոսության համար: Այդպիսի մարդկանց հետ իմաստ չունի խոսել, լսել նրանց նույնպես իմաստ չունի [6, էջ 40] :

Ընթերցման առաջին երկու եղանակները կարող են համատեղվել, քանի որ ուղղված են գրքի ըմբռնմանը: Երրորդն առանձնանում է նրանով, որ առաջարկում է քննադատություն այդ ըմբռնումից հետո: Այսպիսով, երկու եղանակների միավորումը ընթերցողին տալիս են հնարավորություն ուղղորդել և անջատել դրանք ցանկացած պահի, որը շատ կարևոր է: Ընթերցման եղանակը կարող ենք ստուգել ամբողջ գործընթացը բաժանելով մասերի: Հնարավոր է՝ անհրաժեշտ է վերանայել այն քայլ առ քայլ, չնայած այդ ժամանակ այն կընդունվի որպես միասնական ամբողջություն, քանի որ ընթերցման գործընթացը կդառնա սովորական զբաղմունք:
Դրա հետ կապված պետք է հիշել, որ տարբեր կանոններ ընդմիշտ մնում են ինքնավար, նույնիսկ այն ժամանակ երբ գիտակցության մեջ նրանց սահմանները ջնջվում են՝ կազմելով միասնական մի բարդ հմտություն: Եթե չենք կարող դիմել այդ կանոններին առանձին – առանձին, դա կարող է ամբողջությամբ խանգարել ընթերցման գործընթացին:

Ստորև ներկայացնում ենք համակազմ տարրական դպրոցում կարդալու միջոցով աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը նպաստող դրույթներ.

	Երկրորդ դասարան	*Չորրոդ դասարան*
Դասի թեման	<<Երեք աղջիկների հեքիաթը>> **(հանելուկ, դարձվածք)**	<<Իշխանը>> **2-րդ մաս**
Դասի նպատակը	*Աշակերտները՝* -բնագիրը կբաժանեն պարբերությունների, կորոշեն հիմնական միտքը և	*Աշակերտները՝* -բնագիրը կբաժանեն պարբերությունների, կորոշեն հիմնական միտքը և

	կհամապատասխանեցնեն տրված պլանին, (***աշխատանք տեքստի շուրջ***) -կընթերցեն բնագիրը՝ պահպանելով կարդալու որակական բոլոր հատկանիշները (ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ և արագ((***կարդալու հմտություններ***) -կմեկնաբանեն տրված արտահայտությունները և դրանց շուրջ կստեղծեն կապակցված բնագիր՝ զարգացնելով երևակայական մտածողությունը, ***կարաս, բերանը բացել, թզուկ, բերանը ջուր չառնել, քունը հետ բերել, քունը կմտնի քո մեջ, հանելուկներ*** (***բառային աշխատանք***) -կընդլայնեն իրենց ճանաչողական մտածողությունը (հորը ինչքան լցնում են՝ փոքրանում է, ինչքան վերցնում են՝ մեծանում է), -խմբերում աշխատելիս կլսեն ընկերների կարծիքները քննարկվող հարցի վերաբերյալ, ակտիվություն կդրսևորեն դրանք ամբողջացնելու, ընդհանրացնելու հարցում (***քննադատական մտածողության զարգացում***) , -կվերլուծեն հեքիաթի առաջին մասը և դատողություններ կանեն ընթերցած պատմվածքում ծավալվող գործողությունների հիմնական ընթացքի մասին, (***վերլուծություն և գնահատում***) -կթվարկեն հերոսներին բնութագրող բառերը, դրանք կհաստատեն ստեղծագործության փաստերով, (***գրական տարրական գիտելիքներ***) -կվերարտադրեն բնագրի բովանդակությունը՝ վերլուծելով պատմվածքում պատկերված իրավիճակը կկատարեն եզրակացություններ, (***աշխատանք տեքստի շուրջ՝ վերարտադրողական, վերլուծական և քննադատական***	կհամապատասխանեցնեն տրված պլանին ***(աշխատանք տեքստի շուրջ),*** -կընթերցեն բնագիրը՝ պահպանելով կարդալու որակական բոլոր հատկանիշները (ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ և արագ(***(կարդալու հմտություններ),*** -կմեկնաբանեն տրված արտահայտությունները և դրանց շուրջ կստեղծեն կապակցված բնագիր՝ զարգացնելով երևակայական մտածողությունը ***(բառային աշխատանք),*** -կընդլայնեն իրենց ճանաչողական մտածողությունը, -խմբերում աշխատելիս կլսեն ընկերների կարծիքները քննարկվող հարցի վերաբերյալ, ակտիվություն կդրսևորեն դրանք ամբողջացնելու, ընդհանրացնելու հարցում, -կվերլուծեն բնագրի առաջին և երկրորդ մասերը և դատողություններ կանեն ընթերցած պատմվածքում ծավալվող գործողությունների հիմնական ընթացքի մասին ***(աշխատանք տեքստի շուրջ)***, -կթվարկեն հերոսներին բնութագրող բառերը, դրանք կհաստատեն ստեղծագործության փաստերով ***(գրական տարրական գիտելիքներ),*** -կվերարտադրեն բնագրի բովանդակությունը՝ վերլուծելով պատմվածքում պատկերված իրավիճակը կկատարեն եզրակացություններ ***(աշխատանք տեքստի շուրջ՝ վերարտադրողական, վերլուծական և քննադատական***

	պատասխաններ պահանջող հարցադրումներով*),** -կկարողանան գործնականում տարբերակել իրապատում հեքիաթը հրաշապատում հեքիաթներից (գրական տարրական գիտելիքներ*), -կհորինեն հեքիաթի շարունակությունը՝ երևակայության միջոցով նոր լուծում գտնելով բնագրում ներկայացված իրավիճակի համար (***իրադրությունային խաղ՝ ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրմամբ*), -կիմանան առարկա ցույց տվող բառերին տրվող հարցերը (***քերականական գիտելիքներ*), -կզարգանա աշակերտների՝ իրականության որոշակի փաստերի և երևույթների նկատմամբ ճիշտ վերաբերմունք ***(գրական տարրական գիտելիքներ*), ***Զարգացնող նպատակ՝*** ***-հաղորդակցական կարողություններ և հմտություններ՝*** հաղորդակցվել բարեկիրթ վարվեցողության կանոնների համաձայն, ***-համագործակցային կարողություններ և հմտություններ՝*** աշխատել զույգերով, խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը կամ հիմնական գաղափարը, պարզ 2-3 քայլանի հրահանգներ տալ և ակտիվություն դրսևորել՝ իմացածն ընկերներին բացատրելու հարցում, կազմակերպել փոխօգնություն և համատեղ աշխատանք ընդհանուր նպատակին հասնելու համար, ապահովել խմբի պատասխանի պարզությունը և հստակությունը (Առ. 6, 2), ***-ստեղծագործական կարողություններ և հմտություններ՝*** նախադասությունների և կապակցված բնագրի կազմում,	***պատասխաններ պահանջող հարցադրումներով*)** -պատմվածքի բովանդակությունը կհամեմատեն նույն թեմայի անցած պատմվածքների բովանդակության հետ ***(գրական տարրական գիտելիքներ*),** -կհորինեն պատմվածքի շարունակությունը՝ երևակայության միջոցով նոր լուծում գտնելով բնագրում ներկայացված իրավիճակի համար ***(իրադրությունային խաղ՝ ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրմամբ*),** -կզարգանա աշակերտների՝ իրականության որոշակի փաստերի և երևույթների նկատմամբ ճիշտ վերաբերմունք ***(գրական տարրական գիտելիքներ*)** ***Զարգացնող նպատակ՝*** ***-ճանաչողական կարողություններ և հմտություններ՝*** Իշխան ձուկ, հավալուսն, ջրշուն, Ձկնագետ, Գավառագետ, փարփար, սուզաբաղ, ***-տրամաբանական կարողություններ և հմտություններ՝*** ***-հաղորդակցական կարողություններ և հմտություններ՝*** հաղորդակցվել բարեկիրթ վարվեցողության կանոնների համաձայն, ***-համագործակցային կարողություններ և հմտություններ՝*** աշխատել զույգերով, խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը կամ հիմնական գաղափարը, պարզ 2-3 քայլանի հրահանգներ տալ և

	ակտիվ բառապաշարի հարստացում, ***Դաստիարակող նպատակ՝*** **-արժեքային համակարգի զարգացման տեսանկյունից *անձի կամային որակներից*** աշակերտների մոտ կձևավորվեն աշխատասիրություն, հոգատարություն, երախտագիտություն, նվիրվածություն, -անձի սոցիալականացման տեսանկյունից աշակերտները խմբային աշխատանքի միջոցով կճանաչեն միմյանց լավ և վատ կողմերը և իրենց կենսափորձում կսկսեն օգտագործել ընկերների ուժեղ հատկանիշները: ***քննադատական պատասխան պահանջող հարցադրումներ*** , 1. Ինչու վար անելիս ՞գյուղացին գտավ ոսկին: 2. Թզուկը ինչպե՞ս է մնացել կարասի մեջ: 3. Ինչո՞ւ որոշեց թզուկը հարցեր տալ գյուղացուն: 4. Ինչ՞ու հենց այդ հանելուկը: 5. Թզուկը կարասով ոսկին ինչո՞ւ պետք է տա գյուղացուն: 6. Ինչո՞ւ թզուկը շատ դարձվածքներ կամ փոխաբերական իմաստով արտահայտություններ օգտագործեց իր խոսքի մեջ (բերանը ջուր չառնել, քունը հետ բերել, քունը կմտնի քո մեջ) [3, էջ 34] : **Յուրաքանչյուր հարց պատասխանելու համար ցանկալի է.** **-ձևակերպել խնդիրը,** **- հավաքել տեղեկատվություն,** **-օգտագործել այդ տեղեկատվությունը ,** **-մտածել հետևանքների մասին,** **- ուսումնասիրել այլ կարծիքներ:**	ակտիվություն դրսևորել՝ իմացածն ընկերներին բացատրելու հարցում, կազմակերպել փոխօգնություն և համատեղ աշխատանք ընդհանուր նպատակին հասնելու համար, ապահովել խմբի պատասխանի պարզությունը և հստակությունը, (Առ. 6, 2) ***-ստեղծագործական կարողություններ և հմտություններ՝*** նախադասությունների և կապակցված բնագրի կազմում, ակտիվ բառապաշարի հարստացում ***Դաստիարակող նպատակ՝*** **-արժեքային համակարգի զարգացման տեսանկյունից *անձի կամային որակներից*** աշակերտների մոտ կձևավորվեն աշխատասիրություն, հոգատարություն, երախտագիտություն, **քննադատական պատասխան պահանջող հարցադրումներ** 1. Ինչո՞ւ Սիգը սկսեց թագավորել : 2. Իշխանը ինչո՞ւ ապստամբեց : Ինչու նա ասաց, որ մինչև ջուրը չբարձրանա ու չծածկի իրեն, դուրս չի գա : 3. Ինչո՞ւ հենց 18 մետր իջնելուց հետո Իշխանը փակվեց իր քարե ապարանքներից մեկում : Իսկ 6 մետր բարձրանալուց հետո գուցե Իշխանը նորից վերադառնա և տիրություն անի իր երկրին : 4. Ինչո՞ւ քարը համեմատվեց Ագռավաքարի հետ : 5. Ինչո՞ւ սուզաբաղի ասածը, որ ջերմաստիճանը ջրի ստորին

		մասում 4 աստիճան է, իսկ ջրի երեսին՝ 20 աստիճան, գոհացրեց Իշխանին, և այդպես էլ հազարավոր տարիներ ապրեց թագավորությունը : 6. Ինչո՞ւ կարապներն ու հավալուսները, որոնք գալիս էին հեռավոր երկրներից և հարցնում էին Իշխանին. Իշխանը չկար՝ նրանք թողնում, հեռանում էին : 7. Իշխանի պատճառով մարդիկ հասկացա՞ն, որ թագավորությունը մեռնում է, և լիճը պետք է փրկել կործանումից [4, էջ 33] : **Յուրաքանչյուր հարց պատասխանելու համար ցանկալի՝** **- ձևակերպել խնդիրը,** **- հավաքել տեղեկատվություն,** **-օգտագործել այդ տեղեկատվությունը ,** **-մտածել հետևանքների մասին,** **- ուսումնասիրել այլ կարծիքներ:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գյուլամիրյան Ջ. Հ.,** Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., Զանգակ-97, -2006,- 328 էջ:
2. **Գյուլամիրյան Ջ. Հ.,** Խոսքի զարգացում, -Եր., Զանգակ-97, -2004, -288 էջ:
3. **Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ.,** ՄԱՅՐԵՆԻ -2, Մանմար, 2010թ.
4. **Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ.,** ՄԱՅՐԵՆԻ -4, Մանմար,
5. **2008թ.Հայոց լեզու և գրականություն,** Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: -Եր., Անտարես, -2006, -148 էջ:
6. **Մորտիմեր Ադլեր,** Ինչպես ընթերցել գիրքը , Գլուխ 7, Թարգմանությունը՝ Մարգարիտ Գյուլբեկի Հարությունյանի:
7. **Մկրտչյան Գ.,** Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Նոյյան տապան -Եր., -2005, -190 էջ:

8. **Պետրոսյան Հ. Հ.,** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մոդուլային ուսումնական ձեռնարկ, -Եր., ԱՆ-ՁՈՆ, -2008, -316 էջ:

9. **Տեր-Գրիգորյան Ա.Ե.,** Հայոց լեզվի մեթոդիկա տարրական դասարաններում, -Եր., ՝Լույս՝, -1980, -564 էջ:

10. **Տեղեկագիր ՀՀ կրթության և գիտության նախարարության,** h. 6, -2007, էջ 7-39, -64 էջ:

11. **Зайкин М.И.,** Плюсы и минусы малой наполняемости классов в организации учебного процесса. Н.Новгород, 1991.

12. **Зайкин М.И.,** Сельская школа: модернизация содержания образования((Сельская школа.2004.№ 2. с.3-6. Организация образования в сельской местности России (исторический очерк). М.: РАО, 1993.

13. **Бочарова Г.В.,** Стратегия модернизации сельского образовательного социума(Г.В.Бочарова, М.П.Гурьянова((Педагогика.2005. № 8 с.32-38.

14. **Гурьянова М.П.,** Модели реструктуризации сельских общеобразовательных учреждений: опыт регионов((Дидакт. 2003.№3 с.34-39

15. **https//mediamag.am**

РЕЗЮМЕ

Развитие критического мышления у учащихся комплектных классов посредством чтения

Петросян Анна

Ключевые слова: Креативное мышление, доказательства, обоснованное развитие, чтение, постановка задачи, сбор информации, последствия, мнения, комплектная школа.

В статье представлены некоторые методы формирования креативного мышления у учащихся комплектных классов с помощью чтения. Мы предлагаем во втором и четвертом классах использовать постановку вопросов, требующих креативные ответы. При постановке задачи, во время сбора информации у учащихся развивается креативное мышление. Мы представляем также существующие проблемы, преимущества и недостатки комплектных школ. Предлагаем три варианта чтения, с помощью которых процесс урока в упомянутых классах становится целевым.

SUMMARY

Development of critical thinking in students of complete classes by means of reading

Petrosyan Anna

Keywords: Creative thinking, proof, reasonable development, reading, setting goals, collecting information, effects, opinions, co-classroom school.

The article presents some approaches on the development of creative thinking among the students in the co-classroom with the help of reading. In the 2nd and 4th forms we suggest using questions requiring creative answers. While setting goals, collecting information students develop creative thinking. We present the problems, advantages and disadvantages in co-classroom schools as well. We suggest three reading options that provide the target of the lesson process in the mentioned classes.